

աշխատանքները կը ծանրանային Զինուորական Մարմնի եւ զիրքերու մէջ մարանչոյ մեր զինուորներու վրայ, որոնք ե՛ւ կը կոուէին ե՛ւ զիրքեր կը պատրաստէին, քանդուածները կը նորոգէին, միշտ անքուն, կիսաքողց, բայց երբեք տրանջող, երբեք պահանջող:

Անկարելի է չիշխել դոյութեան կոուի երկու օրերուն մեր զինուորներու անօրինակ զբրկանքը, լարուած կարգապահական պարտաճանաչութիւնը:

Ժողովուրդը դեռ ահաւոր չփոթի մէջ, քստմնելի ուրուականի հեռապատկերով ճընչբած, քարացած կը մնար: Ինչե՛ր ըսես չէր խորհեր քաղաքացի մեր ժողովուրդը, որու ծոցին մէջ միշտ թագուն, միշտ անձանօթ, պատրաստուած ենք մենք, իր դաւակներուն զիմազբաւել տալու վերահաս աղէտը:

Քաղաքացի ժողովուրդը իր ծանօթ կառավարական ուժի պոսթիկումին ի տես, սարսափահար, հմայուած կը մնար մէկէն մէջտեղ նետուած իր դաւակներու մարտի դօտեպնդման, զսպող թափին, սիրալի եւ յանդուգն ձեռնարկներուն:

Չէ՛, մենք դեռ պիտի ապրինք: Թշնամին ոտնակոխել մեզ հեշտութեամբ չի կարող: Մէկ օրուան յոյսն ալ մեզ յաղթանակելու դրաւական կրնայ բերել:

Այս հոգեբանութեամբ էր անշուշտ, որ խումբ մը քաղաքացիներ կուռի երրորդ օրը ներկայացան Զինուորական Մարմնին ըսելու.

«Այ թողած տունն ու տեղը, ձեզ օղնելու եկած ենք, ձեզ հետ կուռելու, ձեզ հետ ալ մեննելու, եթէ վիճակուած է մեզ այդ»:

Ինքնտրուիս ծնած ցեղային այդ մտայնութիւնը մեր բարդ աշխատանքներու մէջ անդրնահատելի ոյժ մը եղաւ: Հակադդեցութիւն մէջր այդ՝ անցնող տագնապի օրերու ըսպէական այն տպաւորութեան, որ կը տեսնէինք մեր շուրջը, եւ այդ ալ արձանագրել հոս կարելոր կը համարենք:

Ապրիլ 8-ի վաղ արշալոյսին, թշնամու սկսած կատաղի հրանօթամարտը, հազարաւոր հրացաններու որոտին համընթաց, շտեմտուած խուճապի մատնեց ժողովուրդը, որ հարիւրներով լեցուեցան Առաջնորդարան սպրդած ու ամբած: Կը կարծէին, թէ թշնամին սկսած է

ներխուժումը: Կը խորհէին այնտեղ իրենց փրկութիւն գտնել: Զանոնք սրտապնդեցինք եւ հրաւիրեցինք նստիլ: Թէյ առաջարկուեցաւ բոլորին անխտիր: Յայտնուեցաւ միանգամայն, թէ անտեղի է իրարանցումը:

«Մենք մեր ուժերով եւ միջոցներով մէկ ամիս եւ աւելի կը սրահենք քաղաքը: Այդ մասին մի՛ տարակոտար: Զեպմէ կը պահանջենք միայն որ աշխատանքներով օգնէք մեզ: Ով կարող է չնչին դործ մը կատարել, թող անով աջակցէ: Թող չսպասէ ձեռքը ծալլած: Արձանագրուեցէք եւ անցէք զիրքերու սմբայման դործին» — ըսուեցաւ անոնց:

Բոլորի ղէմքերուն սառն ժպիտ մ'էր, որ եկաւ, հողիւ թոյլ բաւականութեան նշան մը: Նոյն օրը կէսօրին չորս տարէց քաղաքացիներ Առաջնորդարան եկան դարձեալ: Զինուորական Մարմնին ներկայացուցին հետեւեալ փափաքը.

«Մենք կը յնդրենք ձեզմէ, որ արտօնէք մեզ Մ. Նշան») հաներ: Մի քանի հոգով սկըսած ենք դրամ ժողովել: Մատաղ մորթենք, զիշերն ալ հսկում կատարենք: Թերեւս Աստուած այս կրակին վրայ ջուր մը լեցնէ»...

Տպաւորութիւնը խիստ ճնշիչ էր: Մակայն եւ այնպէս, յայտնուեցաւ, թէ Մ. Նշան գուրս հանելը Առաջնորդ հօր կը վերաբերի, մեզ չի նար թոյլատրել այդ: Բայց ըսինք նաեւ, թէ անյարմար է այդ, քանի որ ալօթքի հետ ներկայիս հարկաւոր է անձուէր դործ, անքուն աշխատանք: Գնացին անոնք, կարծեմ չբաւարարուած:

Բայց ահա այսօր եկած են իրենք զոհուելու:

Ապրիլ 9-ին Զ. Մարմնը, հետեւելով կուռի ընթացքին, զբաղուեցաւ թիկունքի հիմնական աշխատանքներու կազմակերպութեամբ ու օրապահիկով ապրող, աղքատ դասի ապ-

*) Վարդի համբաւաւոր Մ. Նշանն է, Հոխիսիմեան կոյսերու Հայաստան բերուած Փրկչի խաչափայտի կտորը: Իբրեւ ապահով վայր փոխադրուած կը պահուէր, քաղաքի համանուն եկեղեցու մէջ յատկապէս պատրաստուած փողոցները պատկերով կտրել եւն: Ահամարէ ժողովուրդը: Հ. Կ.